ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերում փոփոխություններ կատարելու մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2019 թվականի փետրվարի 13-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
“Գնումների մասին” ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը «ՀՀՄՆ-ԷԱՃԱՊՁԲ-19/09»

ՀՀ Մշակույթի նախարարության կարիքների համար համակարգչային տեխնիկայի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀՄՆ-ԷԱՃԱՊՁԲ-19/09» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխության պատճառները և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

Փոփոխության առաջացման պատճառ N 1

Էլեկտրոնային աճուրդի համակարգում հրավերով չի նախատեսվել առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի և արտադրողի անվանման վերաբերյալ տեղեկատվության ներկայացում:

Փոփոխության նկարագրություն: Էլեկտրոնային աճուրդի համակարգում առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի և արտադրողի անվանման վերաբերյալ տեղեկատվության ներկայացում:

Փոփոխության հիմնավորում: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ կետ, ՀՀ կառավարության 04,05,2017 թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 14-րդ կետի 2-րդ ենթակետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ՀՀՄՆ-ԷԱՃԱՊՁԲ-19/09» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Արսեն Սողոմոնյանին:

Հեռախոս՝ 011-58-5178:

Էլեկոտրանային փոստ՝ arsog@mail.ru:

«ՀՀՄՆ-ԷԱՃԱՊՁԲ-19/09» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով

Արձանագրություն N 2

«ՀՀՄՆ-ԷԱՃԱՊՁԲ-19/09» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան **13.02.2019թ.**
ժ. 12:00

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Մարտիրոսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Ավալյան
Հ. Մուշեղյան
Հ. Խեչումյան
Ռ. Պողոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Սողոմոնյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին
(Հ. Մարտիրոսյան)

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.
2. Էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերում փոփոխություն կատարելու մասին.
3. **Էլեկտրոնային աճուրդի** միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ ՝ 0:

2. Էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերում փոփոխություն կատարելու մասին
(Հ. Մարտիրոսյան)

Հաշվի առնելով, որ էլեկտրոնային աճուրդի համակարգում հրավերով չի նախատեսվել առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի և արտադրողի անվանման վերաբերյալ տեղեկատվության ներկայացում՝ գնահատող հանձնաժողովը որոշեց օրենսդրությամբ սահմանված կարգով ընթացակարգի հրավերում կատարել փոփոխություններ:

Հաստատել գնանշման հարցման ընթացակարգի փոփոխված հրավերի և հայտարարության տեքստը՝ հրավերով նախատեսելով առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի և արտադրողի անվանման վերաբերյալ տեղեկատվության ներկայացում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին
(Հ. Մարտիրոսյան)

Հաստատել հանձնաժողովի նիստերի անցկացման հետևյալ ժամանակացույցը.

Էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ՝ մրցույթի հայտերի բացման նիստը հրավիրել **Էլեկտրոնային աճուրդը ավարտվելու օրը՝ ժամը «13:00»-ին:**

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի		
Նախագահ՝	Հ. Մարտիրոսյան	
Անդամներ՝	Ա. Ավալյան	
	Հ.Մուշեղյան	
	Հ. Խեչումյան	
	Ռ. Պողոսյան	

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Սողոմոնյան